ԻՆՉՈ՞Ի ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ՎԱՐՔԸ ԱՐՏԱՑՈԼՎԱԾ ՉԷ ՆՐԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԱՍՅԱՆ

Խնդրի պատմաքաղաքական հիմքերը: Հարցն ունի պատմաքաղաքական արմատներ, և մենք այն կդիտարկենք տարածաշրջանի քաղաքական պատմության՝ հետևյալ հինգ շրջափուլերի հենքի վրա՝ **1828-1917 թվականներ՝** Անդրկովկասը Պարսկաստանից Ռուսական կայսրությանն անցնելուց մինչև կայսրության փլուզումը, **1917-1920 թվականներ՝** երբ Ռուսաստանը դուրս էր մնացել տարածաշրջանային գործընթացներից, **1920-1988 թվականներ՝** խորհրդայնացված Ռուսաստանի՝ տարածաշրջան վերադառնալուց մինչև Ղարաբաղյան շարժումը, **1988-1991 թվականներ՝** Ղարաբաղյան շարժման սկզբից մինչև ԽՍՀՄ լուծարումը, **1991-ից մինչ օրս:**

Ռուսական կայսրության կողմից «կովկասյան թաթարներ» նոր՝ թուրքամետ հանրության ձևավորումը 1828-1917 թթ.: Դա պատմական մի շրջափուլ էր, երբ Անդրկովկասում ո՛չ *Ադրբեջան* անունով աշխարհագրական տարածք կար, ո՛չ վարչական կազմավորում, ո՛չ *ադրբեջանցի* էթնիկական հանրություն: Հայտնի է, որ սկսած XVII դարից հայերը մեծ հույսեր էին կապում վերելք ապրող Ռուսաստանի հետ և նպաստում էին դեպի Անդրկովկաս նրա առաջխաղացմանը: Վերջինս իր հերթին խոստանում էր Ղարաբաղի մելիքությունների հիմքի վրա վերականգնել հայկական անկախ պետությունը[1]: Երբ ռուս-պարսկական պատերազմներից հետո տարածաշրջանն անցավ կայսրությանը, 1828 թ. մարտին Նիկոլայ Առաջինի շնորհագրով կազմավորվեց Հայկական մարզը՝ վավերացնելով դրա ազգային պատկանելության հարցը: Սակայն դրանից հետո վարչական փոփոխություններին 1867 թ. հաջորդեց Անդրկովկասում հինգ նահանգների կազմավորումը իրենց վարչական կենտրոնների՝ Բաքվի, Ելիզավետպոլի, Երևանի, Թբիլիսիի և Քութայիսի անուններով: Դրանց համար գծվեցին այնպիսի սահմաններ, որ որևէ ազգություն անկախ պետության հավակնելու բավարար հնարավորություն չունենա: Երկրամասի յուրացման համար կայսրությունը փորձում էր նոր գրված հողերի իսլամադավան ժողովուրդնե-

[1] Տե՛ս «Армяно-русские отношения в XVIII веке» փաստաթղթերի ժողովածուի IV հատորում զետեղված 1783 թ. ապրիլի 3-ին գրված «Из ордера Ф. А. Потемкина П.С. Потемкину» № 146 փաստաթուղթը, Ер., 1990, էջ 239:

ին դուրս բերել Պարսկաստանի հոգևոր ու մշակութային ազդեցության ոլորտից: Գործի դրվեց **տարածաշրջանի իրանազերծման քաղաքականությունը**[2]: Քաղաքական այդ ուղեգծի իրագործման համար կայսրությունը հենարան ընտրեց երկրամասում բոլորից ուշ հայտնված, փոքրաթիվ, բայց պարսիկի պոտենցիալ մրցակից թյուրքախոս բնակչությանը, որին «մկրտեց» *կովկասյան թաթարներ (кавказские татары)* անունով ու օժտեց տարբեր արտոնություններով: Նախագիծը պայմանավորեց այդտեղ հետագայում ծավալված էթնոքաղաքական գործընթացները: Հասկանալի է դառնում, թե ինչու ճորտատիրական իրավունքի վերացումից հետո, երբ Արևելյան Անդրկովկասը թևակոխեց արդյունաբերական աննախադեպ զարգացման շրջան, Պետերբուրգը Իրանից երկրամաս թափանցող շիա, բայց էթնիկական ինքնությունից զուրկ խառնամբոխ զանգվածին՝ այսպես կոչված *օտխոդնիկներին (отходники)*[3], գրանցեց որպես կովկասյան թաթարներ, համալրեց նորաստեղծ այդ համայնքը տեղի մահմեդական տարբեր ցեղախմբերով՝ նրա կշիռը ավելի նշանակալի դարձնելու համար[4]:

Այն, որ կայսրությունը տարածաշրջանում ծրագրում էր ազգամիջյան բախումներ՝ այն կառավարելի դարձնելու և հայկական գործոնը ճնշելու նպատակով, ցույց է տալիս տեղի մահմեդական զանգվածի «անվանակոչումների» պատմությունը: Տարածաշրջանին տիրելուց անմիջապես հետո Ռուսաստանը պաշտոնական փաստաթղթերում նրանց գրանցեց որպես *պարսկաստանցիք (персияне)*: Քաղաքական ի-

---

[2] Տե՛ս **Свентешовский Т**. Русское правление, модернизаторские элиты и становление национальной идентичности в Азербайджане // «Азербайджан и Россия: общества и государства», М., 2001, էջ 14-49:

[3] Ըստ Քերիմ Քարամ օղլի Շյուքյուրովի՝ XIX դարի սկզբներին Պարսկաստանից Անդրկովկաս թափանցողների թիվը արդեն հասել էր 300.000-ի: Նա գրում է. «… численность отходников в Закавказье из Южного Азербайджана в начале XIX века составляла более 280-300 тыс. человек в год, из коих 130-140 тыс.трудились в неземледельческих отраслях, а остальные 150-160 тыс. - в земледелии; иначе говоря, земледельческий отход преобладал над неземледельческим» (https://goo.gl/tFpKrJ): Ակնհայտ է, որ XIX դարում Անդրկովկասը ենթարկվել է ժողովրդագրական գրոհի, ինչը հանգեցրել է թյուրքալեզու բնակչության կտրուկ աճի: Դրանից առաջ երկրամասում թյուրքալեզու բնակչությունը կազմել է չնչին փոքրամասնություն: Հարցին անդրադարձել են Վ. Ֆ. Մինորսկին, Լ. Փ. Տիգրանովը, Լ. Ս. Սոբոցինսկին, Լ. Կ. Արտամոնովը և այլք: Այդ մասին տե՛ս նաև **Белова Н**. Об отходничестве из северо-западного Ирана в конце XIX – начале XX века // Вопросы истории, № 10, 1956, с. 112-121 (էլեկտրոնային հասցեն՝ goo.gl/Soy5c1):

[4] Տե՛ս **Варданян Т**. Азербайджанцы: история одного незавершенного этнопроекта (историко-аналитический очерк) (Ер., 2012) մենագրության 25-րդ էջում հեղինակը, հղում կատարելով «Списки населенных мест Российской империи по Кавказскому краю, LXV. Бакинская губерния, по сведениям 1859 по 1864 год Кавказским статистическим комитетом при главном управлении Наместника Кавказского / сост. Н. Зейдлин. Тифлис, 1870» ժողովածուին, մեջբերում է այդ քաղաքականությունը հաստատող վկայություն: Աղբյուրի 85 էջում գրված է. «Тюркское племя составляет по нашему списку 44 % (210.223 чел.) общего итога населения губернии. Если же считать и городских жителей, которые по Бакинской губернии по общей статистике принадлежат к этой народности, то оказывается, что татары составляют далеко более половины всего народонаселения. Официальные сведения показывают еще несравненно более татар, **причисляя к ним все народы за исключением русских и армян**» (ընդգծումը մերն է - Ա. Մ.):

մաստով դա վրիպում էր: Շուտով այդ եզրը դեն նետվեց, շրջանառության մեջ դրվեց *«քրիստոնյաներ-մահմեդականներ»* կաղապարը[5] և կովկասյան թաթարները մահմեդականների մեջ առանձնացվեցին որպես արտոնյալ համայնք: Սակայն պարզվեց, որ դա էլ հարմար չէ կայսրությանը: Եթե այն ամրագրվեր, երկրամաս մտնող ռուսները քրիստոնյաների հետ պիտի մասնակցեին ապագա կոնֆլիկտներին: Նորաբնակ ռուսների չեզոքությունն ապահովելու համար Սանկտ Պետերբուրգը երկրամասի էթնոքաղաքական նկարագրի համար առաջադրեց նոր կաղապար՝ «մուսուլմաններ-հայեր»՝ նախանշելով տարածաշրջանում ապագայում ծավալվելիք կոնֆլիկտների կողմերին: Երկրամասի իրանազերծման լավատեսական հեռանկարներին հակառակ՝ ծրագիրը դարձավ էթնիկական ինքնություն չունեցող *կովկասյան թաթարի* գիտակցությունը դեպի Ստամբուլ շրջելու խմորիչ: Ստամբուլի գործակալների ու քարոզիչների ջանքերը այդ գործընթացում իրենց պտուղները տվեցին 1890-ականներին[6], երբ հենց Ռուսաստանում և Եվրոպայում ուսում ստացած կովկասյան թաթար համարվող մտավորականները իրենց քաղաքական գիտակցությամբ շրջվեցին դեպի պանթյուրքականությունը[7]:

Կովկասյան թաթարների հանդեպ քաղաքական ու տնտեսական բարեհաճությունը դրսևորվեց հենց այն ժամանակ, երբ կայսրությունը հայերից խլում էր վանքապատկան հողերն ու փակում հայկական դպրոցները: Բայց նույնիսկ այդպիսի պայմաններում հայերը արդյունաբերական կենտրոններում կարևոր դիրքեր գրավեցին ու կանգնեցին սոցիալական ու ազգային արդարության շարժումների առաջին շարքերում: Ահա թե ինչու 1905-1907 թվականներին ցարական հատուկ ծառայությունները հայ-թաթարական բախումներ հրահրեցին և բացահայտ կամ վատ քողարկված ձևով անցան թաթարների կողմը[8]: Հակառակ այն բանին, որ Արևելյան Անդրկովկասի էթնոքաղաքական պատ-

---

[5] Անդրկովկասի էթնիկական բազմազանությունը այդ ձևով շրջանցելու քաղաքական հնարքին կայսրությունը դիմել էր դեռ մինչև տարածաշրջանում հայտնվելը: 18-րդ դարում էլ Սանկտ Պետերբուրգից Անդրկովկասը մուսուլմանների ու քրիստոնյաների երկրամաս էր երևում: Այն ժամանակ դա նպատակահարմար էր դեպի հարավ առաջանալու կայսրության ծրագրերի տեսակետից:

[6] XX դարում թյուրքական աշխարհում ծավալված իրադարձությունները հիմք են տալիս ***թուրքիզմը*** առանձնացնել ***թյուրքիզմից***՝ որպես ազգայնականության գաղափարախոսությամբ ու քաղաքական վարքով տարբեր մի երևույթ:

[7] Կովկասյան թաթար մտավորականների փոքրաթիվ շերտի գիտակցության մեջ կատարված շրջադարձը դեպի Ստամբուլ նկարագրված է Եվա-Մարիա Աուխի աշխատություններում: Մասնավորապես տե՛ս **Ева-Мария Аух**. Между приспособлением и самоутверждением // «Азербайджан и Россия: общества и государства». М., 2001, էջ 50-87:

[8] Ստամբուլը, որ ուշիուշով հետևում էր երկրամասում ազգային հարցում ռուսական գործելակերպին, չէր կարող չնկատել կայսրության հակահայ քաղաքականության այդ դրսևորումները և իրեն չհամարել նրա համախոհը: Ի դեպ, խորհրդանշական զուգադիպությամբ նույն 1905 թվականին են տեղի ունենում և՛ հայ-թաթարական բախումները Արևելյան Անդրկովկասում, և՛ թուրք ամբոխի կողմից հայկական ջարդերը Կոստանդնուպոլսում:

կերը պաշտոնապես ներկայացվում էր **«մուսուլմաններ-հայեր»** ձևաչափով, բախումները որակվեցին որպես **«հայ-թաթարական»**: Դա նախ ցույց է տալիս, որ ռուսական քաղաքական վերնախավը չէր ցանկանա, որ այդ կոնֆլիկտը հնչեղություն ստանար որպես ***հայերի ու մուսուլմանների կոնֆլիկտ***, որը հեշտությամբ կընկալվեր որպես անծայրածիր Ռուսիայի երկու հիմնական կրոնական համայնքների՝ մուսուլմանների ու քրիստոնյաների հակամարտություն, ինչը կարող էր կրոնական հողի վրա այլ բախումների խմորիչ դառնալ Անդրկովկասի սահմաններից դուրս: Մյուս կողմից դա հաստատում է, որ ոչ թե ընդհանրապես երկրամասի մուսուլման հավաքականությունը, այլ հենց կովկասյան **թաթարն** էր համարվում երկրամասի էթնոքաղաքական գլխավոր գործոն՝ հետին պլան մղելով բնիկ ժողովուրդներին[9]:

Երկրամասի մահմեդականներին պարսկական մշակութային ակունքներից հեռացնելու՝ Սանկտ Պետերբուրգի հաշվարկները ի վերջո կայսրության համար անցանկալի արդյունքների հանգեցրին: Ստեղծվեց թուրքական քաղաքականության ծիրում ներքաշված և պոտենցիալ հակառուսական մղումներ ունեցող մի գործոն:

Գուցեև հետագայում կայսրությունը վերանայեր հայերի նկատմամբ իր վերաբերմունքը և դադարեր երես տալ թուրքական գաղափարական բացիլակիր դարձած կովկասյան թաթարներին: Դրա նախանշաններն արդեն իսկ կային: 1912 թ. օգոստոսի 12-ին Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովը Նիկոլայ Երկրորդ ցարին ներկայացրել է Ելիզավետպոլի նահանգը Շուշի և Ելիզավետպոլ կենտրոններով երկու գեներալ-նահանգապետության բաժանելու նախագիծ: Դեռևս 1906-ին ներկայացված այս առաջարկը բարձրացվեց ու քննարկվեց նաև 1909, 1913, 1917 թվականներին, սակայն չընդունվեց վրաց-թաթարական ուժերի դիմադրության պատճառով: 1917-ին վրա հասան «կարմիր հեղափոխության» խառնակ տարիները, կայսրությունը լքեց ասպարեզը՝ տարածաշրջանում որպես քաղաքական ժառանգություն թողնելով հայերի ու թաթարների միջև սերմանած թշնամանքը և իր իսկ ձևավորած թուրքամետ մի գործոն: Ռուսական քաղաքագիտական միտքը ցայսօր այդ մասին նախընտրում է լռել:

Հայերի կոտորածները օսմանյան և կովկասյան թաթարների կողմից Արևելյան Անդրկովկասում 1918-1920 թթ.: Ռուսական կայսրությունը փլուզվեց՝ տարածաշրջանը թողնելով քաղաքական քաոսում: Հայերին սպառնացող մեծագույն վտանգը թուրքերի ներխուժումն էր, ուստի հասկանալի է դառնում, թե ինչու վերջիններս նպաստեցին, որ 1917-ի նոյեմբերին Բաքվում իշխանությունը խաղաղ ձևով անցնի սո-

---

[9] *Մուսուլմաններ* եզրույթն առավելապես օգտագործվում էր բնիկ իսլամադավան ժողովուրդներին կովկասյան թաթարների հետ համերաշխության մղելու և հայերին որպես երկրատարածքի բոլոր մուսուլմանների թշնամի ներկայացնելու նպատակով: Այնպես որ *մուսուլմաններ* և *կովկասյան թաթարներ* հասկացություններին ռուսական և թուրքական ծառայությունները դիմել են ըստ քաղաքական նպատակահարմարության:

վետների ձեռքը: Բաքվի կոմունան երկրամասը հռչակեց Խորհրդային Ռուսաստանի անկապտելի մաս, մինչդեռ Անդրկովկասի գլխավոր ազգային կուսակցությունները (*վրաց մենշևիկները*, *Հայ հեղափոխական դաշնակցությունը* և կովկասյան թաթարների *մուսավաթ կուսակցությունը*) պայքարում էին Անդրկովկասը Խորհրդային Ռուսաստանից անջատելու համար: 1918 թ. փետրվարին Համառուսաստանյան հիմնադիր ժողովի՝ Անդրկովկասից ընտրված պատգամավորները և տեղական ազգային կուսակցությունների ներկայացուցիչները Թբիլիսիում հիմնադրեցին Անդրկովկասյան սեյմը, որը ապրիլին հռչակեց Անդրկովկասի Ֆեդերատիվ Դեմոկրատական Հանրապետությունը: Այն գոյատևեց ընդամենը երեք ամիս և ցրվեց մայիսի 26-28-ին: Թուրքերը դրան էին սպասում: Հայաստանի Հանրապետությունը իր անկախության հենց առաջին օրերին Սարդարապատում, Բաշ Ապարանում և Ղարաքիլիսայում պաշտպանեց գոյության իր իրավունքը և ձախողեց Հայաստանը՝ քարտեզից ջնջելու թուրքերի պլանը: Շարունակելով արշավանքը՝ թուրքերը շարժվեցին դեպի Բաքու, ուր չէր կարողանում մտնել Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կառավարությունը: Դեպի Բաքու տանող ամբողջ ճանապարհին թուրքական բանակն ու մուսավաթական կազմավորումները հրկիզում էին հայկական գյուղեր, սրի քաշում խաղաղ բնակիչներին[10]: 1918 թ. սեպտեմբերին գերմանական աջակցությամբ Բաքվին մոտեցած թուրքական զորքերը վերջնագիր ներկայացրին քաղաքի Հայոց ազգային խորհրդին[11]: Սեպտեմբերի 15-ին թուրքերը գրավեցին Բաքուն, որին հաջորդեց հայ բնակչության եռօրյա սպանդը, որ իրագործում էին թուրքական զորքերն ու տեղի թաթարական խաժամուժը: 1918 թ. երկրամասում ազգային ուժերի հարաբերակցությունը թույլ է տալիս հավաստելու, որ առանց թուրքական միջամտության Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը չէր կայանա: Փաստորեն թուրքական կանոնավոր բանակն է Արևելյան Անդրկովկասի հայկական բնակավայրերի բնաջնջման ու Բաքվում շուրջ 30 հազար հայերի ջարդի միջոցով 1918 թ. հիմնել թուրքական նոր պետություն[12]:

Խորհրդային Ադրբեջանի իսլամադավան բնիկ ժողովուրդների բռնի ձուլմամբ ադրբեջանցի նոր ազգ կառուցելու ստալինյան նախագիծը: Խորհրդային իշխանության հաստատմամբ Անդրկովկասը մտավ զարգացումների նոր փուլ: Արևելքում սոցիալիստական հեղափոխութ-

---

[10] Տե՛ս **Ս. Միրզոյան, Ա. Ղազինյան,** Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., Եր., 2003: Փաստաթղթերի ժողովածուն ավելի քան բավարար նյութ է տրամադրում Արևելյան Անդրկովկասի հայության կոտորածները Հայոց ցեղասպանության թուրքական քաղաքականության փուլերից մեկը համարելու համար:

[11] Վերջնագիրը Բաքվի մատույցներից ներկայացվել է թուրքական բանակի հրամանատարության և գերմանական գլխավոր շտաբի պետի անունից: Այդ քայլով թուրքերը հող էին նախապատրաստում Բաքու մտնելուց հետո հայկական ջարդերի համար: Վերջնագիրը գրված էր հենց այդպիսի սպառնալիքով (տե՛ս **Ս. Միրզոյան, Ա. Ղազինյան,** նշվ. աշխ., էջ 83-84):

[12] Այդ փորձը թուրքական բանակը կրկնել է 1974 թ.՝ ներխուժելով Կիպրոս և այնտեղ հիմնելով այսպես կոչված Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը:

յան ծավալման ուղեգծի քողի տակ բոլշևիկյան Մոսկվան սկսեց սիրաշահել Թուրքիայում իշխանության եկած քեմալականներին, իսկ ներսում՝ կովկասյան թաթարներին: Տարփողելով Խորհրդային Ադրբեջանում նոր տիպի ինտերնացիոնալ պետություն կառուցելու կարգախոսը՝ բոլշևիկները հայկական հսկայական տարածքներ տվեցին Թուրքիային, իսկ Նախիջևանը և Արցախը տարբեր կարգավիճակներով մտցվեցին Խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ: Շուտով թուրքերը, լուծված համարելով Արցախն ու Նախիջևանը Ադրբեջանին հանձնելու խնդիրը, երես թեքեցին Մոսկվայից և անցան նրա հակառակորդների ճամբարը: Մոսկվան անաղմուկ հաշտվեց «թուրքական խաղերում» թույլ տված իր սխալի հետ և Անկարայի խաբեությանը ի պատասխան՝ որոշեց կոտրել կովկասյան թաթարների թուրքական կողմնորոշումը: Ստալինը հրաշալի գիտակցում էր, որ իրանազերծման քաղաքականությունը հանգեցրել է *կովկասյան թաթարներ* կոչված էթնիկապես անորոշ բազմության թուրքացմանը և փորձեց ուղղել այդ սխալը: **Խորհրդային Ադրբեջանում ոչ ազգային հանրապետություն կառուցելու 1920-ական թվականների գաղափարը հանվեց օրակարգից, և առաջադրվեց Ադրբեջանի իսլամադավան ժողովուրդներից հանրապետության տիտղոսակիր ադրբեջանական ազգ կառուցելու նախագիծը**[13]: Դրա նպատակն էր հանրապետության տարամետ՝ թուրքական ու պարսկական «հակումներ» ունեցող իսլամադավան ժողովուրդներից «թխել» ոչ միայն պարսկականից, այլև թուրքականից տարբեր ինքնություն ունեցող ադրբեջանական ազգ: Սկսվեց տարաբնույթ «էթնիկական խմորներից» պետականակիր ազգ «հունցելու» գործընթացը: Հանրապետության ադրբեջանականացումն ընդունեց պարսկական արմատներից սերած բնիկ ժողովուրդների բռնի ուծացման, նրանց մշակույթի թալանի բնույթ, որ այլևս պիտի համարվեր նոր ստեղծվող ադրբեջանական ժողովրդի մշակույթ: Մոսկվան աչք էր փակում այն բռնությունների վրա, որ բաժին էին ընկնում բնիկ ժողովուրդներին՝ նրանց բռնի ադրբեջանականացման (ըստ էության՝ թուրքացման) ընթացքում: 1980-ականներին նրանցից շատերը վերջնականապես դուրս մղվեցին հանրապետության երբեմնի բազմերանգ էթնիկական քարտեզից: Իրականում այդ տարիներին թալիշների, լեզգիների, թաթերի ու մյուս ազգությունների մեծ մասն անցավ յուրատեսակ ազգային ընդհատակ՝ այնտեղից հետագայում դուրս գալու հույսով[14]: **Ադրբեջանական ազգ կառուցելու ստալինյան նախագիծը գործնականում ընդունեց հանրապետության իսլամադավան ոչ թուրք ժողովուրդների թուրքացման, ըստ էության՝ նրանց ցեղասպանության բնույթ:** Ինտերնացիոնալիզմի առաջադիրք ներկայացվող հանրապետության հովանավորությանը հանձնված Նախիջևանում 1979 թվականին հայ գրեթե

---

[13] Տե՛ս **Варданян Т**. Азербайджанцы: история одного незавершенного этнопроекта, **Казинян А.** Полигон «Азербайджан», Ер., 2011:

[14] Տե՛ս **Харатян Г**. Проблемы этнического выживания в Азербайджане վերլուծությունը՝ goo.gl/NzdXgk էլեկտրոնային հասցեով, **Ара Марджанян.** О темпе роста и национальном составе населения Азербайджана հոդվածը goo.gl/uoa5vB էլեկտրոնային հասցեով:

չէր մնացել: 1988-ին արդեն նախիջևանահայության ցեղասպանությունը լռության քողի տակ կատարված իրողություն էր:

Ադրբեջանահայության ցեղասպանության անթաքույց քաղաքականությունը ԽՍՀՄ տրոհման տարիներին: Արցախահայությունը ոտքի կանգնեց այն հույսով, որ վերակառուցման ուղին բռնած երկրի ղեկավարությունը կարճ ժամանակում լուծում կտա իր հարցին: Բայց մարզխորհրդի որոշման հաջորդ օրը ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոն կատարվածը որակեց «ծայրահեղական տարրերի սադրանք»: Փաստորեն այդ որոշումն ինքն էր կրքերը բորբոքող սադրանք, որ ազատեց Բաքվի ձեռքերը: Մեկ շաբաթ անց տեղի ունեցավ սումգայիթյան ցեղասպանությունը: Ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող զինվորական կայազորը քաղաքում հայտնվեց բավականին ուշ, իսկ այնտեղ մտնելուց հետո էլ ոչ մի վճռական քայլ չձեռնարկեց ամբոխին սաստելու համար: Այդպիսին էր վերևից տրված ցուցումը: Նույնը կրկնվեց Բաքվում 1990 թ. հունվարին[15]: **1988-1991 թթ.՝ ԽՍՀՄ գոյության վերջին երկուսուկես տարիներին, Խորհրդային Ադրբեջանում եղեռնի ենթարկվեց ադրբեջանահայությունը՝ Արևելյան Անդրկովկասի քաղաքական, տնտեսական ու մշակութային պատմությունը կերտողներից մեկը: Դա ինտերնացիոնալ (ոչ ազգային) հանրապետության հիմնադիր ժողովուրդներից մեկի ցեղասպանություն էր և բացառիկ երևույթ XX դարի պատմության մեջ:** Հրաժարվելով կատարվածը ցեղասպանություն որակելուց՝ գորբաչովյան Մոսկվան բավարարվեց այն ***ջարդեր*** անվանելով[16]: Երևույթին համարժեք քաղաքական գնահատական չտալու երկրի առաջնորդ Գորբաչովի դիրքորոշումները փաստորեն նոր բռնությունների թույլտվություն էին: 1991 թ. կեսերին, երբ ակնհայտ էր, որ ԽՍՀՄ տրոհումը հասել է վերջնագծին, Գորբաչովը Բաքվի տրամադրության տակ դրեց խորհրդային բանակի՝ Գանձակում տեղակայված 23-րդ դիվիզիան՝ «Օղակ» անվանված գործողությամբ երկրամասը հայաթափելու համար: Արցախի խաղաղ բնակչության դեմ ԽՍՀՄ կազմաքանդման եզրագծում պատժիչ այդ գործողությունը, երկրամասի հայաթափումից բացի, այլ բացատրություն չունի[17]:

Արևմուտքն անկասկած հետևում էր ԽՍՀՄ-ում ծավալվող դեպքերին[18]: Ինչպես հայտնի է, 1988-1989 թթ. այն չափավոր զգուշությամբ սա-

---

[15] Խորհրդային Ադրբեջանի հայության ցեղասպանությանը նվիրված մեծաքանակ գրականություն կա: Տե՛ս «Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев». Ер., 1989, **Мосесова И., Овнанян А.** Вандализм в Баку. Ер., 1991, **Мелик-Шахназарян Л.** Военные преступления Азербайджана против мирного населения Нагорно-Карабахской Республики. Ер., 1997, «Ադրբեջանահայություն. կորսված հայրենիք, համարժեք փոխհատուցում», Եր., 2006, **Лебедь А.** За державу обидно, М., 1995:

[16] 1989 թ. նոյեմբերի 19-ին ԱՄՆ Կոնգրեսի՝ ղարաբաղյան հակամարտության մասին ընդունած բանաձևի էլեկտրոնային հասցեն է՝ http://thomas.loc.gov/cgi-bin/query /z?c101:S.J.RES.178.ES:

[17] 1991-ի օգոստոսին Մոսկվայում տեղի ունեցած խռովությունը խանգարեց մինչև վերջ իրագործել այն:

[18] Սակայն 1991-ին և դրանից հետո էլ արևմտյան մայրաքաղաքներում, որտեղ անհամբեր սպասում էին ԽՍՀՄ տրոհման ավարտին, հայտնի էր, որ Բաքվին դատապարտող իրենց ելույթները որևէ ազդեցություն չեն կարող ունենալ: Դրանք արվում

տարում էր Ղարաբաղյան շարժումը, բայց ավելի եռանդուն կերպով՝ երկրի առաջնորդ Գորբաչովին, որի գործողություններում արդեն իսկ 1990-ին ակնհայտ երևում էր, որ նա երկիրը տանում է դեպի փլուզում: 1991-ի վերջերին, երբ ԽՍՀՄ-ը մտավ լուծարման վերջնագիծ, և միութենական հանրապետությունները սկսեցին անկախության հռչակումների «շքերթը», հայտնի դարձավ, որ Արևմուտքը հետխորհրդային տարածքում նորանկախ պետությունները ճանաչելու է նախկին միութենական հանրապետությունների սահմաններում[19]: Պարզ դարձավ, որ ԽՍՀՄ տրոհման այդ ծրագիրը Արևմուտքը «մտքում ուներ» վաղուց, ինչը հետահայաց վերլուծությամբ կարելի է տեսնել ղարաբաղյան խնդրի կապակցությամբ նրա բոլոր արձագանքներում: Դա նշանակում է, որ Արևմուտքը ի դեմս Արցախի 1988-ից ի վեր տեսել է միայն ԽՍՀՄ-ի փլուզման պայթուցիկ:

Ադրբեջանահայության ցեղասպանություն՝ մարդկության դեմ ցայսօր լռության մատնված հանցագործություն: 1988-1990 թթ. ԽՍՀՄ կենտրոնական մամուլը շռայլորեն նյութեր էր տարածում Ադրբեջանից ու Հայաստանից փախստականների հանդիպակաց հոսքերի մասին՝ հավասարության նշան դնելով կոտորածներից փրկված հայերի ու իրենց բնակարանները նրանց հետ շահեկան պայմաններով փոխանակող հայաստանաբնակ ադրբեջանցիների միջև: Սա այն բազմաթիվ հնարքներից էր, որով հակամարտությունից դուրս էր թողնվում ադրբեջանահայությունը:

Հետխորհրդային շրջանում հարցը քաղաքական օրակարգից հանելուն նպաստեց նորանկախ պետությունները նախկին միութենական հանրապետությունների սահմաններում ճանաչելու Արևմուտքի քաղաքական որոշումը, որի ազդեցությունը տարածաշրջանային զարգացումների վրա մնում է մինչ օրս[20]:1992-ին Արևմուտքը Ադրբեջանի և Հայաստանի անդամակցումը միջազգային կառույցներին քարկապեց միմյանց հետ: 1992-ի հունվարի 30-ի նույն օրն են Հայաստանի Հանրապետությանն ու Ադրբեջանական Հանրապետությանը ընդունվել ԵԱՀԽ: Այդ արարողության միանվագության քաղաքական իմաստը Եվրոպայի առաջադրած պայմաններին երկու երկրների համաձայնությունը ստանալն էր (առաջին հերթին ՀՀ-ի, քանի որ նրան էին հասկացնում զիջումների գնալ և չբարձրացնել ղարաբաղյան թեման): 1992 թվականի մարտի 5-ին երկու նորանկախ հանրապետությունները ընդունվեցին ՄԱԿ՝

էին ԽՍՀՄ կազմաքանդման գործընթացներում մարդասիրության դիրքերից հավուր պատշաճի ներկայանալու համար:

[19] Եվրախորհուրդը ԵՄ արտգործնախարարների անունից հռչակագրի տեսքով 1991-ի դեկտեմբերի 16-ին ընդունել է քաղաքական որոշում՝ ետխորհրդային տարածքում նորանկախ պետությունները նախկին միութենական հանրապետությունների սահմաններում ճանաչելու մասին (տե՛ս European Forin Policy. Key Dokuments, Edited by Chistopher Hill & Karen E. Smith. Dokument 4a/21, էջ 282: Էլեկտրոնային հասցեն՝ http://hist.asu.ru/aes/EFP_Documents_0415158222.pdf) :

[20] Բավական է նկատել, որ 1991-ից ի վեր այդ որոշումն է առավելապես պայմանավորում ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման՝ Արևմուտքի մոտեցումը:

դարձյալ Երևանին հասցեագրված թափանցիկ, բայց չբարձրաձայնված քաղաքական ենթատեքստով: Բաքվի ագրեսիվ պահվածքը զսպելու մտադրությամբ Արևմուտքն ակամա անդրադառնում էր ադրբեջանահայության թեմային: 1993 թ. հունվարի 21-ին Եվրոպայի խորհրդարանը ընդունեց Հայաստանի վերաբերյալ բանաձև, որի առաջին կետում արձանագրված էր ադրբեջանահայությանը պատուհասած ողբերգությունը. «…**ա) ուշադրության առնելով Ադրբեջանում իրագործված ջարդերից փրկված 300 հազար փախստական հայերի ողբերգական վիճակը**,…»: Հատկանշական է, որ բանաձևի երկրորդ կետում նշվում էր խնդրի կարգավորման այն ուղին, որը եվրոպական այդ կառույցի կանոնադրության տեսակետից ինքնին հասկանալի ու ընդունելի էր համարվում թե՛ քաղաքական, թե՛ իրավական առումներով: Փաստաթղթում արձանագրված է. «**ԵԱՀԽ-ն խաղաղության հաստատման փորձեր է ձեռնարկում՝ պայմաններ ստեղծելով Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի իշխանությունների միջև բանակցությունների համար**»[21]:

Սա ադրբեջանահայության վերաբերյալ Եվրոպայի ընդունած թեև իրավիճակային, բայցևայնպես բացառիկ փաստաթուղթ է: Հետագայում, հատկապես 2000-ից ի վեր ընդունված փաստաթղթերում, կազմակերպությունը սողքով հեռացել է այդ դիրքորոշումից: ԵԱՀԿ Մինսկի խմբի ներկայացրած վերջին առաջարկություններում ընդհանրապես մոռացության է մատնված ադրբեջանահայ փախստականության հարցը: Կարծես չեն եղել ջարդեր, զանգվածային բռնություններ: Այսպես կոչված «Մադրիդյան փաստաթուղթը» և դրա տարբերակները փախըստականների վերադարձ ասելով նկատի ունեն ԼՂԻՄ-ի և ԼՂՀ-ի շրջափակմանը մասնակցած և այդ ընթացքում հայերի նկատմամբ բազմաթիվ հանցագործություններ գործած ադրբեջանցիներին, որոնք միջազգային իրավունքի տեսակետից փախստական չեն կարող համարվել[22]: Արևմուտքի դիրքորոշման այդ կերպափոխությունը միայն Բաքվի կողմից եվրոպական կառույցներին «խավիարային դիվանագիտության» մեջ ներքաշելով չի բացատրվում: Այդ նահանջը բխում է մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունը (ԱՀ) նախկին Խորհրդային Ադրբեջանի սահմաններում ճանաչելու՝ Արևմուտքի ելակետային որոշումից և բացատրություն ստանում դրա շրջանակներում:

Արևմուտքն արել ու անում է այն, ինչ բխում է իր շահերից: Բայց հակամարտության գործընթացից ադրբեջանահայությանը դուրս թողնելը միայն Արևմուտքի կամ այդ հարցում նրա մոտեցումները կիսող Ռուսաստանի Դաշնության խնդիրը չէ: Դա նախ և առաջ մեր խնդիրն

---

[21] Բանաձևի էլեկտրոնային հասցեն՝ goo.gl/X1qJWB:

[22] ԼՂԻՄ-ում և նրա հարակից տարածքներում նախկինում ապրող ադրբեջանցիները միջազգային իրավունքի տեսակետից փախստական չեն ոչ միայն այն պատճառով, որ նրանք զանգվածաբար մասնակցել են ԼՂԻՄ-ի ու հետագայում նաև ԼՂՀ շրջափակմանը, այլև, որ նրանք ապրել և ապրում են իրենց քաղաքացիության երկրում:

է: **Հասկանալու համար, թե որքան համարժեք չեն մեր ազգային-քաղաքական մոտեցումները քննարկվող խնդրին, բավական է ասել, որ ադրբեջանահայության հետ կատարվածը մենք ինքներս պաշտոնապես ցեղասպանություն չենք անվանում, և մեր կողմից ընդհանրապես դուրս է մղված Հայոց ցեղասպանության համատեքստից: Այս կապը մեր փոխարեն ոչ ոք չի տեսնելու, իսկ եթե ուրիշները տեսնեն, կարող են և լռության մատնել կամ այդ մասին կխոսեն, երբ իրենց պետք լինի, ինչպես դա արվում է Օսմանյան կայսրության ու հանրապետական Թուրքիայի կատարած եղեռնագործության պարագայում:** Այսօր Հայոց ցեղասպանության թեման հայտնվել է Եվրոպայի քաղաքական օրակարգում, և մենք մեր մոտեցումներով պարտավոր ենք գոնե չնպաստել, որ պատմաքաղաքական ճշմարտությունը այլոց համար դառնա շահարկումների առարկա: Մինչդեռ ճշմարտությունը պահանջում է, որ մենք ադրբեջանահայության ցեղասպանությունը չանջատենք Հայոց ցեղասպանության քաղաքական գնահատման հիմնախնդրից: Հայ ազգային գիտական միտքը օբյեկտիվ ու սուբյեկտիվ տարաբնույթ պատճառներով այդ հիմնախնդրի իմաստավորումն ու ներկայացումը իր ամփոփիչ-ավարտական տեսքին չի հասցրել:

Անպատասխան մնացած հարցեր: Այն, թե ինչու թուրքը դարձավ մարդկության դեմ կատարված առաջին հանցագործության հեղինակը, դեռևս խորքային հետազոտության կարոտ հարց է, որ պահանջում է երևույթի համալիր քաղաքակրթական մոտեցում: Սա ոչ միայն հայ ժողովրդի, այլև ողջ մարդկային քաղաքակրթության համար հրատապ հարց է:

Պակաս կարևոր չէ նաև հայի ընդհանուր նկարագրի՝ նրա հոգեկերտվածքի, աշխարհընկալման, քաղաքական մտածողության ու պահվածքի հարցը: Ինչո՞ւ աշխարհաքաղաքական բարդ խաղերում հայտնված հայությունը XIX դարի կեսերից մինչև XX դարի քսանական թվականները չի կարողացել գտնել իր առջև ծառացած քաղաքական կողմնորոշումներին ու ինքնակազմակերպմանը վերաբերող հարցերի համարժեք պատասխանները: Սրանք նույնքան հրատապ, բայց ազնիվ պատասխաններ չստացած տեսական լուրջ ենթախորք ունեցող կարևոր հարցեր են:

Բայց կա հարցերի մեկ այլ խումբ՝ կապված տարածաշրջանում իրենց հաշիվները պարզող խոշոր տերությունների վարքի հետ: Այո՛, նրանք և միայն նրանք կարող էին կանխել մարդկային քաղաքակրթության դեմ կատարված այդ ոճրագործությունը: Սակայն Հայկական հարցի քննությունը այլ բան է պարզում: Դեռևս 1915-ից առաջ Օսմանյան կայսրությունը համոզվել էր, որ Հայկական հարցին խոշոր տերությունները անդրադառնում են ոչ թե հայերին հնարավոր աղետից փրկելու, այլ Փոքր Ասիայում ու նրանից արևելք ընկած տարածքներում իրենց հարաբերությունները պարզելու համար, և ոչ ավելին: Անգլիային, Գերմանիային, Ռուսաստանին հայն ու Հայաստանը հետաքրքրում էին

որպես սեփական ծավալապաշտական նախագծերի իրագործման միջոց կամ դրան խանգարող գործոն:

Մենք արևմտահայության ցեղասպանության այդ հարցերին անդրադառնում ենք՝ նկատի ունենալով այն զուգահեռները, որոնք ակնհայտ հիմքեր են տալիս Հայոց ցեղասպանության ընդհանուր պատկերում արևմտահայության ու ադրբեջանահայության ցեղասպանության ակտերի քաղաքական նույնացման, դրանք նույն հանցագործ ծրագրի իրագործման տարբեր փուլեր դիտարկելու համար:

Գլոբալ բնույթի իրադարձությունների այն դաշտը, որի հետ անմիջականորեն կապվում է ադրբեջանահայության ցեղասպանությունը, ԽՍՀՄ կազմաքանդումն էր: Պարզ է, որ ինչպես գորբաչովյան թիմը, այնպես էլ դեպքերին հետևող արևմտյան քաղաքական շրջանակները գիտեին, որ *սումգայիթյան* ու հանրապետությունով մեկ դրան հետևած հայերի զանգվածային ջարդերը ցեղասպանությունից բացի, այլ որակում չեն կարող ստանալ: Գիտեին, սակայն պետք է անտեսեին դա, քանի որ Ադր. ԽՍՀ-ում ծավալվող իրադարձությունները տեղավորվում էին ԽՍՀՄ փլուզման նախագծում որպես դրա խթանիչներ: Դրանք պետք է անտեսվեին նաև 1991-1992-ին, երբ ԱՀ-ն ընդունվեց ՄԱԿ նախկին Ադր. ԽՍՀ սահմաններում: Դա անհամատեղելի էր ադրբեջանահայության ցեղասպանության փաստի հրապարակային ճանաչման ու դատապարտման հետ: Հնարավոր չէր, օրինակ, ընդունել, որ Կարսի գործող պայմանագրի համաձայն Նախիջևանը չի պատկանում ԱՀ-ին և հետո ճանաչել այն Նախիջևանով հանդերձ: Դա պետք է լռության մատնվեր և մատնվեց: Նույն կերպ անհնար էր ընդունել ադրբեջանահայության ցեղասպանության փաստը և ապա ճանաչել ցեղասպան ԱՀ-ն Լեռնային Ղարաբաղով հանդերձ:

Արևմտյան Հայաստանում, Նախիջևանում ու Արևելյան Անդրկովկասում Հայոց ցեղասպանության՝ որպես մարդկության դեմ կատարված հանցագործության գնահատականը երևույթի քաղաքական իմաստին համարժեք լինել չի կարող առանց այդ հարցում խոշոր տերությունների պահվածքը հաշվի առնելու, որ մեկ դրդել են թուրքերին դիմելու այդ քայլին, մեկ անմիջապես նպաստել են դրան, մեկ հանդես են եկել որպես «չեզոք ու անկողմնակալ» դիտորդներ, մերթ ուղղակի մասնակցել են վայրագության այդ ակտերին: Հարցին անդրադարձել են շատերը[23]: Արևմտահայությանը պատուհասած ողբերգության մեջ խոշոր տերությունների խաղացած դերը պարզ ու սպառիչ ձևակերպել է հայտնի պետական գործիչ, 1916-1922 թթ. Անգլիայի վարչապետ Դեյվիդ Լլոյդ Ջորջը՝ «Հայերը մեր զոհն են»[24]:

Խնդրի արդի վիճակը. ինչո՞ւ Ադրբեջանի քաղաքական նկարա-

---

[23] Այս մասին ամենից հանգամանալից ուսումնասիրություններից մեկը **Տիգրան Սահակյանի** «Հայոց ցեղասպանության մեղսակիցները» աշխատությունն է (Եր., 2015): Իր նախորդների պես նա նույնպես Հայոց ցեղասպանություն ասելով նկատի ունի արևմտահայոց 1915-1923 թթ. եղեռնը:

[24] **Дэвид Ллойд Джордж,** Правда о мирных договорах. Т. 2, М., 1957, с. 390.

գրում տեղ չի գտնում նրա ցեղասպան պետություն լինելու փաստը: Թվում է՝ ԱՀ-ի ցեղասպանությամբ հիմնված և ցեղասպան պետություն լինելու փաստերը վաղուց պիտի լինեին միջազգային քաղաքական օրակարգում: Սակայն դա այդպես չէ, ինչը բացատրություն է պահանջում:

Մեծ տերությունների դիրքորոշումներին մենք մասամբ անդրադարձանք, սակայն պարզվում է՝ մեզանում նույնպես կա տեսակետ, որ նպատակահարմար չէ բարձրաձայնել Արևելյան Անդրկովկասի ու Նախիջևանի հայության ցեղասպանության փաստը: Այդ մասին է վկայում այն, որ ադրբեջանահայությանը պատուհասած ողբերգությունը պետական ատյանների կողմից ստացել է ամենատարբեր, բայց ոչ ցեղասպանություն որակումը[25]:

Իսկ ի՞նչ հիմնավորումներ ու փաստարկներ կարող են դրվել ադրբեջանահայության ցեղասպանության փաստը լռության մատնելու և Հայոց ցեղասպանության ընդհանուր համատեքստից դուրս թողնելու քաղաքականության հիմքում: Մենք ելնում ենք այն կանխավարկածից, որ իշխանությունների վարքն այդ հարցում բանական հիմքեր ունի և չի հետապնդում այն գիտակցված ձևով խեղաթյուրելու նպատակ: Մենք այդ դիրքորոշման հիմքում ընկած հնարավոր փաստարկներին կանդրադառնանք պաշտոնապես չհնչեցվող, «կուլիսների ետևում» կես բերան ասվող տեսակետների թվարկմամբ և որպես ուրիշի հնարավոր խոսք՝ դրանք կառնենք չակերտների մեջ:

Առաջին հնարավոր փաստարկ: «Ադրբեջանահայության ցեղասպանությանը միջազգային հնչեղություն տալը կխանգարի արևմտահայության ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին: Միջազգային հանրությունը, որ Հայոց ցեղասպանություն ասելով հասկանում է Օսմանյան կայսրության սահմաններում տեղի ունեցածը, մեզ չի հասկանա: Ավելին, դա կխանգարի Արևմտյան Հայաստանի հայության ցեղասպանության՝ արդեն միջազգային ճանաչման հունի մեջ մտած գործընթացին»:

Դիտարկումներ առաջին փաստարկի վերաբերյալ: Այս փաստարկ-հիմնավորումը մեզ չի արգելում ճիշտ ներկայացնել թուրքերի կողմից կատարված հանցագործության սահմանները և Հայոց ցեղասպանության փաթեթում ներառել Օսմանյան կայսրության ժամանակներում նրա սահմաններից դուրս թուրքերի կատարած ոճրագործությունները, ի թիվս որոնց նաև 1918 թթ. Նախիջևանում և Արևելյան Անդրկովկասում թուրքական կանոնավոր բանակի իրագործած հայկական կոտորածները: Գոնե դա պետք է արվի, քանի որ դեպի Բաքու շարժվելու ամբողջ ճանապարհին և Բաքվում հայության կոտորածը

[25] Վերջին պաշտոնական անդրադարձը թեմային արվել է 2018 թ. փետրվարին ՀՀ Ազգային ժողովի կողմից սումգայիթյան եղեռնագործության 30-րդ տարելիցին նվիրված լսումների առիթով: Բայց սպասվածին հակառակ՝ ԱԺ համապատասխան կառույցներում մշակված հայտարարության տեքստում ***ցեղասպանություն*** բանալի բառը չկար: Հայտարարության տեքստի էլեկտրոնային հասցեն՝ goo.gl/tb9qhn

Հայոց ցեղասպանության հիմնավորման փաթեթի ամենից առանցքային, անհերքելի ուժ ունեցող փաստերից է: Արևելյան Անդրկովկասի հայության 1918-1920 թթ. կոտորածները չեն հակասում Հայոց ցեղասպանության միջազգայնորեն ընկալելի պատկերացումներին ու փաստական հենքին, քանի որ խոսքը հենց օսմանյան բանակի կատարած հանցագործության մասին է:

Երկրորդ հնարավոր փաստարկ: «Ցեղասպանությունը, ըստ սահմանման, պետական հանցագործություն է: Արևելյան Անդրկովկասի հայության (ադրբեջանահայության) և արևմտահայության ցեղասպանության փաստերը «մեկ միասնական գործում» միավորելը կապված է իրավաբանական դժվարությունների հետ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ դրանք տեղի են ունեցել տարբեր պետական կազմավորումներում: 1915-1923 թթ. իրադարձությունների համար «հաշիվ պետք է ներկայացվի» պատմության գիրկն անցած Օսմանյան կայսրությանը, իսկ 1918-1920 թթ. Արևելյան Անդրկովկասում տեղի ունեցած դեպքերի համար՝ թուրքական բանակի կողմից հիմնված Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությանը: Խնդիրն իրավաբանորեն ավելի է բարդանում, եթե ադրբեջանահայության ցեղասպանության գործին միացվեն Խորհրդային Ադրբեջանի գոյության տարիներին Նախիջևանի հայաթափումը և հայերի նկատմամբ սումգայիթյան եղեռնագործությամբ սկսված իրադարձությունները: Վերջին դեպքում ընդհանրապես անորոշ է մնում հանցագործությունն իրագործած «պետության հասցեն», քանի որ Խորհրդային Ադրբեջանը մաս է կազմել խորհրդային միասնական պետության: Ավելին, Բաքվից արդեն ձայներ են հնչում, որ Սումգայիթը Մոսկվայի կազմակերպած գործն է, և որ տեղի ունեցածի գլխավոր պատասխանատուն նա է»:

Դիտարկումներ երկրորդ փաստարկի վերաբերյալ: Երկրորդ փաստարկը նույնպես չի հակասում մեր այն մտքին, որ Հայոց ցեղասպանության «քրեական փաստերի փաթեթ» պետք է ներբերվեն թուրքական կանոնավոր բանակի կողմից Արևելյան Անդրկովկասում կատարված հանցագործությունները: «Հայոց ցեղասպանության փաթեթի» այդպիսի ընդլայնումը նախևառաջ իրագործելի է ոչ միայն արձանագրված և լայնորեն հայտնի փաստերի ու փաստաթղթերի առկայությամբ, այլև քաղաքական այն հանգամանքով, որ հանցանքի մեղադրանքով մեր օրերում միջազգային օրակարգում հայտնված սուբյեկտը մնում է նույնը՝ Օսմանյան կայսրությունը: Ազգերի լիգա ընդունվելու մերժումն ստացած Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կառավարող շրջանակները այսպիսի հարցադրմամբ գործին առնչվում են որպես թուրքերի ցեղասպանական ծրագրին ծառայող հանցախումբ:

Ավելի նուրբ է ԽՍՀՄ տարիներին ադրբեջանահայության ցեղասպանության «գործը կազմելու» հարցը: Կատարված հանցագործության արծարծումը պահանջում է ճշգրիտ հաշվարկված բանաձևումներ, քա-

նի որ բուն թեման անցանկալի կարող է լինել ԽՍՀՄ իրավահաջորդ ՌԴ համար, որ այսօր ՀՀ ռազմավարական դաշնակիցն է: Չի բացառվում, որ Մոսկվան ակնարկներով կամ բաց տեքստով մեր իշխանություններին հայտնած լինի, որ թեմայի արծարծումը անցանկալի է իր համար, և հենց դա լինի պաշտոնական Հայաստանի կողմից եղեռնագործությանը համարժեք գնահատական չտալու գլխավոր քաղաքական շարժառիթը: Այս հարցում ըստ երևույթին անթույլատրելի է անհիմն շտապողականություն ցուցաբերելը: Կարևոր է, որ հարցը այնպես նախապատրաստվի, որպեսզի հստակ ցույց տրվի, որ խորհրդային առաջին տարիներին հօգուտ Ադրբեջանի հայկական հողերի թալանի մեղքը, որ հետագայում հանգեցրել է Ադր. ԽՍՀ հայության ցեղասպանությանը, կրում է բոլշևիզմը, որը անուղղելի վնասներ է հասցրել նաև Ռուսաստանին ու ռուս ժողովրդին: Դա իրոք այդպես է եղել, և մեր խնդիրն է ցույց տալ հայ և ռուս ժողովուրդներին պատճառված կորուստների իսկական մեղավորին, ավելի ճիշտ՝ հանցավորին:

Մյուս հանգամանքը, որ բացատրություն է տալիս խորհրդային տարիներին ադրբեջանահայության նկատմամբ իրագործված ցեղասպանությանը, ադրբեջանական ազգ կառուցելու ստալինյան նախագիծն էր: Այն, ինչպես նշել ենք, հակառակ մտահղացման, վերածվել է ոչ միայն Արևելյան Անդրկովկասի ու Նախիջևանի հայաթափման, այլև բնիկ ժողովուրդների բռնի թուրքացման նախագծի: Ստալինյան ծրագրի ձախողման պատճառով այսօր Ռուսաստանն իր հարավում բազմազգ ու ոչ ազգային Ադրբեջանի փոխարեն ունի բացահայտ թուրքամետ նոր պետություն:

Վերջապես, խորհրդային տարիներին ադրբեջանահայության ցեղասպանության արյունոտ փուլում՝ 1988-1991 թվականներին, տեղի ունեցածը դարձյալ չէր բխում Ռուսաստանի ու ռուս ժողովրդի շահերից: Սումգայիթյան եղեռնագործությամբ գորբաչովյան թիմի կողմից գործողության մեջ դրված ԽՍՀՄ տրոհման նախագիծը Ռուսաստանին նետեց տնտեսական ու ժողովրդագրական ճգնաժամի գիրկը: Խոշոր տերությունից Ռուսաստանը հայտնվեց սովորական պետության կարգավիճակում: Պուտինյան թիմից ահռելի ջանքեր պահանջվեցին ռազմաարդյունաբերական համալիրը հզորացնելու և երկրի դիրքերը գլոբալ քաղաքական դաշտում վերագտնելու համար:

Թե՛ Ռուսաստանը տապալելու բոլշևիզմի քայլերը, թե՛ ադրբեջանական ազգ կառուցելու ստալինյան նախագիծը, թե՛ գորբաչովյան թիմի կողմից ԽՍՀՄ կազմաքանդման գործողությունը անդառնալի կորուստներ պատճառեցին և՛ հայ ժողովրդին, և՛ ռուս ժողովրդին: Դա ակնհայտ փաստ է, և ադրբեջանահայության ցեղասպանության թեմայի արծարծման մեր ռազմավարությունը պետք է ելնի ՌԴ համար ընդունելի այդ իրողությունից:

Երրորդ հնարավոր փաստարկ: «Ցեղասպանությունը հանցագործություն է, որ որոշակի ժամանակային սահմաններում է կատարվում:

Միջազգային հնչեղություն ստացած *«Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում 1915-1923 թթ.»* ձևակերպումն ընկալելի է, քանի որ նկատի է առնվում նույն պետության ներսում ութ տարվա ընթացքում տեղի ունեցած դեպքերը: Սակայն հիմա հայ փորձագետների մի զգալի մասը համիդյան ջարդերն է դիտում որպես Հայոց ցեղասպանության սկիզբ, իսկ ուրիշները պահանջում են «Հայոց ցեղասպանության փաթեթում» ներառել սումգայիթյան եղեռնագործությունն ու դրան հետևած մյուս զանգվածային բռնություններն ու ջարդերը: Դրանք տեղի են ունեցել տարբեր պետական կազմավորումներում և իրարից տասնամյակների հեռավորության վրա են գտնվում: Ընդհանրապես կոռեկտ չէ խոսել մեկ դար տևողությամբ ցեղասպանության մասին, այդպիսի բան չի լինում»:

Դիտարկումներ երրորդ փաստարկի վերաբերյալ: Վերջին միտքն այն մասին, որ «կոռեկտ չէ խոսել մեկ դար տևողությամբ ցեղասպանության մասին», անհերքելի է թվում, եթե նկատի է առնվում, որ վերջին հարյուրամյակում Արևելյան Անդրկովկասում «Ադրբեջան» անունով երեք պետություն է եղել, որոնց միջև չկա իրավահաջորդության անընդհատություն, ուստի անհնարին է դառնում մեկ դարի ընթացքում տեղի ունեցած ողբերգական դեպքերի հեղինակ-հանցագործին «գտնելը»:

Ինչ վերաբերում է «Մեկ դար տևողությամբ ցեղասպանություն չի լինում» ձևակերպմանը, ապա պետք է նկատել, որ ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիան[26] ժամանակային նման որևէ սահմանափակման մասին դրույթ չունի: Ավելին, որպես «ցեղասպանություն» որակվող հանցագործությունների ցանկում կան այնպիսիք, որոնք կարող են կատարվել ոչ թե ցեղասպանական «միանվագ ակտով», այլ միայն երկարատև ժամանակահատվածում: Այդպիսիք են, օրինակ, Կոնվենցիայի երկրորդ հոդվածի գ) ենթակետում նշված՝ «որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը», կամ դ) ենթակետով սահմանված՝ «խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացումը» հանցագործությունները: Ձևակերպումները ցույց են տալիս, որ ցեղասպանության հանցագործության ըմբռնման մեջ տևողության հարցն ընդհանրապես չի կարևորվել փաստաթուղթը մշակողների կողմից: Հանցագործության բնութագրման համար կարևոր են դիտվել դրա նպատակը և հետևանքները: Ավելի լուրջ է մարդկանց միևնույն խմբի նկատմամբ ցեղասպանական ակտերի իրագործման հարցը, եթե դրանք կատարվել են նույն տարածքում իրավահաջորդությամբ կապ չունեցող պետություններում: Հանցագործի նույ-

[26] Կոնվեցիայի հայերեն պաշտոնական թարգմանությունը տե՛ս goo.gl/Qdc5tv էլեկտրոնային հասցեով:

նականացման խնդիր է ծագում, որն անլուծելի է թվում, եթե արարքը դիտվում է միայն որպես պետական քաղաքականության դրսևորում, ինչպես հաճախ ներկայացվում է: Ի դեպ, Կոնվենցիայի տեքստում որևէ դրույթ չկա պետությունը և միայն պետությունը հնարավոր հանցագործ արարքի սուբյեկտ համարելու համար: Ավելին, փաստաթղթի 6-րդ կետում հնարավոր հանցագործների մեջ առաջին հերթին նշված են անհատ անձինք ու նրանց խմբերը. այն «անձինք, որոնք մեղադրվում են ցեղասպանություն կամ 3-րդ հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու մեջ, դատվում են այն երկրի իրավասու դատարանի կողմից, որի տարածքում կատարվել է այդ հանցագործությունը, կամ այնպիսի միջազգային քրեական դատարանի կողմից, որը կարող է իրավազորություն ունենալ սույն Կոնվենցիայի՝ այդ իրավազորությունը ճանաչած կողմերի նկատմամբ»: Ինչպես տեսնում ենք, 1948 թ. ՄԱԿ-ի ընդունած Կոնվենցիան չի անդրադառնում մարդկանց միևնույն խմբի նկատմամբ նույն տարածքում միմյանց հաջորդած տարբեր պետական կազմավորումների ցեղասպանական քաղաքականությանը: Եվ դա հասկանալի է, քանի որ նրա հիմնական նպատակը ցեղասպանական ակտի (երևույթի) սահմանումն է եղել: Ոչ մի իրավական փաստաթուղթ (օրենք, սահմանադրություն, պայմանագիր) չի կարող սպառել իրավական կարգավորման ենթակա երևույթի բոլոր հնարավոր դրսևորումները: Դրա համար դրանք ժամանակ առ ժամանակ ճշգրտվում, վերանայվում, վերախմբագրվում են: Հաճախ կարիք է զգացվում սահմանելու, թե վիճելի հարցերի դեպքում որ ատյանն ունի դրա դրույթները մեկնաբանելու իրավասություն:

Անշուշտ, երկարատև ժամանակահատվածում և պետական տարբեր կազմավորումներում տեղի ունեցած ցեղասպանական գործողությունները պահանջում են ավելի հստակ ձևակերպում ու լրացուցիչ իմաստավորում: Իրականում, էական տարբերություն չկա արևմտահայության և արևելահայության նկատմամբ իրականացված ցեղասպան գործողությունների միջև: Չէ՞ որ եթե արևմտահայության ցեղասպանությունը իրագործել են և՛ Աբդուլ Համիդը, և՛ երիտթուրքերը, և՛ քեմալականներն ու հանրապետական Թուրքիան, երբ արդեն չկար Մուստաֆա Քեմալը, ապա Նախիջևանում ու Արևելյան Անդրկովկասում նույնպես շարունակաբար առաջ է տարվել հայասպանության նույն քաղաքականությունը, երբ թուրքական բանակը իշխանությունը հանձնել է մուսավաթականներին, երբ Խորհրդային Ռուսաստանի XI կարմիր բանակը հիմնել է Խորհրդային Ադրբեջանը, իսկ ԽՍՀՄ լուծարումից հետո վերջինիս փոխարեն ասպարեզում հայտնվել է մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունը: Փաստորեն թե՛ Թուրքիայում և թե՛ *Ադրբեջան* անվանված պետության մեջ իշխանության ղեկին հայտնվել են տեղական թուրքերը, արձանագրվում է նույն փաստը. փոխվում են իշխանությունները, քաղաքական կարգերը, պետականության ձևերը, բայց անփոփոխ

է մնում հայության ցեղասպանության քաղաքական ուղեգիծը, որը երբեմն քողարկվում, երբեմն էլ բաց տեքստով հրապարակվում է որպես ազգային նպատակ, ինչպես հիմա անում են Բաքվի իշխանությունները: Հայասպանության նպատակն ու այն իրագործելու քաղաքական ուղեգիծը XX դարում կապ չեն ունեցել այն բանի հետ, թե ինչ ուժեր են իշխանության եկել Թուրքիայում կամ Ադրբեջանում, թե քաղաքական ինչ գաղափարախոսության են հետևել նրանք հրապարակավ, թե, վերջապես, նրանք եղել են միջազգային իրավունքի ճանաչված սուբյեկտներ, թե ոչ:

Ինչի՞ մասին է դա խոսում: Միակ բանը, որ հուշում են տրամաբանությունն ու առողջ բանականությունը, այն է, որ տվյալ դեպքում երևույթի հիմքերը պետության՝ որպես հաստատության կամ երկրի քաղաքական կարգի փոփոխության մեջ չեն: Երևույթի պատճառները պետք է փնտրվեն պետական ու քաղաքական համակարգերից դուրս, և այդ «դուրսը» ազգային քաղաքական մշակույթն է, որը նույնն է մնացել քաղաքական կարգերի փոփոխության ընթացքում: Սա միակ եզրակացությունն է, որին հանգեցնում է Հայոց ցեղասպանության ողջ փաստական հենքի քննությունը: Կոնվենցիան այդ հարցերին չի անդրադարձել, և դրա խնդիրն այդ չի եղել: Սակայն ոչ մեկին չի արգելվում ցեղասպանության հանցագործության նոր ըմբռնումներ դնել գիտական շրջանառության մեջ ու տեղեկատվական դաշտերում՝ հասունացնելու համար դրանց քննարկումները միջազգային ատյաններում: Ոչ մեկը չի կարող հերքել ոչ միայն ողջ մարդկային քաղաքակրթության համար վտանգավոր երևույթը սահմանելու ու հանցագործությունը պատժելու, այլև այն ծնող պատճառների հարցերը քննելու կարևորությունը: Ընդ որում՝ Հայոց ցեղասպանության դեպքում դրա համար ևս բավարար փաստական նյութ կա: Կան նաև թուրքական քաղաքական մշակույթի մասին գիտության ու արվեստի և քաղաքական հեղինակավոր գործիչների բազմաթիվ գնահատականներ: Մենք կբավարարվենք միայն Դեյվիդ Լլոյդ Ջորջի վերն արդեն հիշատակված աշխատությունից հետևյալ մեջբերումով. «Թուրքերը Եվրոպայում ապրում են հարյուրավոր տարիներ, բայց միշտ եղել են ատելի ճնշողներ ու ամեն աղետի աղբյուր: Թուրքերը եվրոպացի չեն դարձել, չեն յուրացրել եվրոպական քաղաքակրթությունը և պատերազմների մշտական պատճառ են եղել: Պետք է չափազանց լավատես լինել թուրքերի բնույթի մեջ փոփոխություն սպասելու համար»[27]: Պատմությունը և հատկապես Անդրկովկասի թուրքերի քաղաքական վարքը գալիս են հաստատելու այս գնահատականի արդարացի լինելը: Թուրքական քաղաքական մշակույթը պատմական հանգամանքների բերումով դարձել է ցեղասպանածին, և ցեղասպանագիտությունը պարտավոր է զբաղվել այդ հարցի ուսումնասիրությամբ:

---

[27] Տե՛ս **Дэвид Ллойд Джордж** Правда о мирных договорах. Т. 2, М., 1957, էջ 400:

Բանալի բառեր – *ադրբեջանահայություն, հայերի կոտորածները Արևելյան Անդրկովկասում, ադրբեջանական ազգ կառուցելու ստալինյան նախագծը, Սումգայիթի ցեղասպանական գործողություն, իսլամադավան բնիկ ժողովուրդների ցեղասպանությունը*

АЛЕКСАНДР МАНАСЯН – ***Почему геноцидное поведение Азербайджана не отражено в его политической характеристике?*** – Как в Турции, так и в Азербайджане наблюдается схожее явление: ни переход от одной политической системы к другой, ни изменение экономического строя, ни смены правительств не отвратили эти государства от курса на геноцид армян. Это наводит на мысль, что причины геноцидной политики надо искать не только в недрах государства как интитута (к тому же имперски ориентированного), но и за его пределами – в особенностях исторически сложившейся политической культуры нации. Однако выясняется, что в регионах геополитической напряжённости (Передняя Азия и Закавказье были и остаются такими регионами) ответственность за совершение геноцида несёт не только государство – исполнитель преступления, но и непосредственно вовлечённые в дела региона великие державы. Их причастность проявляется в форме то бездействия, то ложного нейтралитета, то косвенного (а подчас и прямого) соучастия.

Ключевые слова: *армянство Азербайджана, погромы армян в восточном Закавказье, сталинский проект строительства азербайджахской нации, геноцид коренных исламслких народов в Азр. ССР, сумгаитский акт геноцида, Запад и распад СССР*

ALEKSANDR MANASYAN – ***Why is the Genocidal Behavior of Azerbaijan not Reflected in its Political Image?*** – Both in Turkey and Azerbaijan, there is a similar phenomenon: neither the transition from one political-economic system to another, nor the change of government turned these states away from the course of the Armenian Genocide. The fact suggests that the reasons for the genocidal policy must be searched not only “in the depths” of the state (especially imperially oriented) as an institution, but also in the peculiarities of the historically formed political culture of the nation. It also turns out that in geopolitically tense regions (Western Asia and Transcaucasia were and remain such regions), the responsibility for the commission of genocide is not only the state that carried out the crime, but the great powers directly involved in the “affairs of the region”. Their complicity manifests itself either in the form of inaction, then false neutrality, or indirect (and even direct) participation.

Key words – *Armenians of Azerbaijan; pogroms of Armenians in Transcaucasia; the Stalinist project of building the Azerbaijani nation; the genocide of indigenous peoples in Azerbaijan; the Sumgait act of genocide; the West and collapse of the USSR*